ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«20» 04 2016թ.
ՊԿ/510-657

2/1916-16
21.04.16թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Ա. ԹԱԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թաթոյան

Ձեր քննարկմանն է ներկայացվում <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը:

Խնդրում եմ օրենքի նախագծի վերաբերյալ Ձեր դիտողությունները և առաջարկությունները հնարավորին սեղմ ժամկետում ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

Ս. ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ՄՈՒՏՔ
ՄՏԻՑ ԹԻՎ 11-119
«21» 04 2016թ.

Կատ. Ս. Սիմոնյան
հեռ. 294-423

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-98 օրենքի 1-ին հոդվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի>> (այսուհետ՝ Կանոնագիրք) 59-րդ հոդվածում <<պետի>> բառից հետո լրացնել <<(զորամասի հրամանատարի)>> բառերը, իսկ <<չհանելով կոշիկները,>> բառերը փոխարինել <<առանց կոշիկների, չհանելով>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Կանոնագրքի 92-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում <<մարտական դրոշի,>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 3. Կանոնագրքի 99-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<, և ձեռքի նռնակները ողջ անձնակազմի համար՝ յուրաքանչյուրին երկուական նռնակ>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 4. Կանոնագրքի 101-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունում՝

1) <<և ձեռքի նռնակները>> բառերը հանել.

2) լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Տագնապի դեպքում պահակատանը գտնվող անձնակազմը զենքը լիցքավորում է ինքնուրույն:>>:

ՀՈԴՎԱԾ 5. Կանոնագրքի 102-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել երկրորդ պարբերությունը.

2) երրորդ պարբերության առաջին նախադասությունում <<ձեռքի նռնակների և բռնկիչների հաշվառման գիրքը,>> բառերը փոխարինել <<զինամթերքը տեղադրելու և>> բառերը.

3) չորրորդ պարբերությունում <<, նռնակների և բռնկիչների>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 6. Կանոնագրքի 106-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<անցագրերի>> բառը փոխարինել <<թույլտվության գրության>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 7. Կանոնագրքի 114-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<պահակապետը կամ նրա>> բառերը փոխարինել <<պահակապետի՝ պահպանության տեխնիկական միջոցների գծով օգնականը (օպերատորը), իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ պահակապետի>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 8. Կանոնագրքի 115-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում <<սարքավորման օպերատորին>> բառերը փոխարինել <<սարքավորումները>> բառով.

2) երրորդ պարբերությունում <<համապատասխանությունը>> բառերից հետո լրացնել <<ծեփապատճեին>> բառը:

ՀՈԴՎԱԾ 9. Կանոնագրքի 116-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել երկրորդ նախադասությունը:

ՀՈԴՎԱԾ 10. Կանոնագրքի 117-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<զորավարժության>> բառից հետո լրացնել <<(զորամասի կազմով ճամբարային հավաքի)>> բառերը, իսկ <<նշանակել>> բառից հետո լրացնել <<մինչև>> բառը:

ՀՈԴՎԱԾ 11. Կանոնագրքի 143-րդ հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասությունում <<ուղղակի>> բառը փոխարինել <<անմիջական>> բառով, իսկ <<, եթե դեմքով ճանաչում է>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 12. Ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 147-րդ հոդվածին հաջորդող վերնագիրը, 148-րդ, 149-րդ, 150-րդ, 151-րդ, 176-րդ և 194-րդ հոդվածները:

ՀՈԴՎԱԾ 13. Կանոնագրքի 158-րդ, 159-րդ, 160-րդ, 161-րդ և 162-րդ հոդվածներում <<(պահեստ)>> բառից և դրա հոլովաձևերից հետո լրացնել <<կամ հավաքակայան>> բառերը և դրա հոլովաձևերը:

ՀՈԴՎԱԾ 14. Կանոնագրքի 160-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<(պահեստը, դրամարկղը)>> բառերը փոխարինել <<(պահեստը) կամ հավաքակայանը>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 15. Կանոնագրքի 205-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում <<կամ>> շաղկապից հետո լրացնել <<եթե>> բառը:

ՀՈԴՎԱԾ 16. Կանոնագրքի 210-րդ հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասությունում <<քաջաց>> բառը փոխարինել <<Ձեզ>> բառով:

ՀՈԴՎԱԾ 17. Կանոնագրքի 234-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունում <<, խցերում պահվող մեկուսացվածների քանակը>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 18. Կանոնագրքի 248-րդ հոդվածում <<Չհանելով կիսաճտքավոր կոշիկները,>> բառերը փոխարինել <<Առանց կոշիկների, չհանելով>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 19. Կանոնագրքի 10-րդ գլխի վերնագրում, դրան հաջորդող վերնագրում և 262-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<առանձին տեղադրված ռադիոտեխնիկական և այլ հատուկ>> բառերը փոխարինել <<զորամասի տեղաբաշխման վայրից դուրս տեղակայված>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 20. Կանոնագրքի 264-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<պարեկները կազմում են մի քանի գրաֆիկ>> բառերը փոխարինել <<կազմվում են պարեկային գրաֆիկներ>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 21. Կանոնագրքի 265-րդ հոդվածում՝

1) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Պարեկների զենքը և դրանց լցավորված պահեստատուփերը (պահունակները) պահվում են ստորաբաժանման զենքի պահասենյակում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ստորաբաժանման հերթապահի սենյակում, զենքները՝ առանձին զինաբուրգում, իսկ պահեստատուփերը (պահունակները)՝ առանձին մետաղյա արկղում (առանձին մետաղյա պահարանում), որոնք կողպվում են ստորաբաժանման հերթապահի կողմից և կնքվում վերջինիս կնիքով:>>.

2) ուժը կորցրած ճանաչել երրորդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 22. Կանոնագրքի հավելված 5-ի 7-րդ կետում <<, առանձնապես մարտական դրոշի մոտ,>> բառերը հանել:

ՀՈԴՎԱԾ 23. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքում զորամասերում և մշտական տեղակայման վայրից դուրս պահակախմբերի և պարեկների կողմից պատշաճ ծառայության իրականացման, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողության, մարտական դրոշի պահպանման հետ կապված հարաբերությունների հստակեցման անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել սահմանել այնպիսի գործառույթների համալիր, որը հնարավորություն կտա կրճատել պահակախմբերի մեջ ներգրավված անձնակազմի քանակը, որոշակի դեպքերում պահակային ծառայությունը փոխարինել պարեկային ծառայությամբ, հստակեցված չեն պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ պատասխանատու անձանց կազմը: Միաժամանակ, մարտական դրոշի պահպանման պարտականությունը հանվում է պահակախմբերի պարտականությունների շրջանակից՝ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի դրույթներին համապատասխան:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ապահովել զորամասերում և մշտական տեղակայման վայրից դուրս պահակախմբերի և պարեկների կողմից պատշաճ ծառայության իրականացումը, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողությունը, այդ ուղղությամբ պատասխանատու անձնակազմի պարտականությունները:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենքի նախագծով հստակեցվում են պահակապետի պարտականությունները, հսկիչ-պահպանության խմբերի և պարեկների ծառայության իրականացման, մարտական դրոշի պահպանման հետ կապված դրույթները, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողության կարգը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի զորքերի ծառայության վարչությունների կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Ապահովել զինված ուժերում կայազորային և պահակային ծառայությունների պատշաճ կազմակերպման ու իրականացման գործընթացը, այդ ուղղությամբ պաշտոնատար անձանց և զինծառայողների պարտականությունները:

7. Այլ տեղեկություններ չկան:

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	**ընթացիկ (n-րդ) տարի**		Հաջորդող 3 տարիները		
			n +1	**n +2**	**n +3**
	Ըստ n - րդ տարվա պետական բյուջեի	փոխու-թյունը n - րդ տարվա պետական բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ	Չկա	-	-	-	-
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	Չկա	-	-	-	-
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	Չկա	-	-	-	-
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Չկա				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	Չկա				

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը հրապարակային քննարկման ներկայացնելու և դրա արդյունքում արված առաջարկությունների վերաբերյալ

1. Օրենքի նախագիծը տեղադրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայք էջում՝ www.mil.am հասցեով:

2. Նախագծի վերաբերյալ էլեկտրոնային կամ գրավոր եղանակով դիտողություններ կամ առաջարկություններ չեն ներկայացվել: